California’s Child Support Program (Կալիֆորնիայի Երեխաների Ապրուստադրամի Ծրագիր)՝
Տեղեկության աղբիւր ծնողների համար...

# Արտոնագրի (license) կասեցման եւ վերականգնման գործընթացը







Երեխայի ապրուստադրամի ժամանակին վճարումները ոչ միայն կօգնեն ձեր երեխաներին, այլ կփրկեն Ձեր վարորդական, մասնագիտական, կամ այլ իրավունքների դադարեցվելուց: Նահանգային արտոնագրումը համապատասխանեցնող համակարգը մերժում կամ դադարեցնում է նահանգի կողմից տրված արտոնագրերը այն չխնամող ծնողների, որոնք չեն վճարել դատարանի կողմից որոշված իրենց երեխայի ապրուստադրամը:

## Ի՞նչպէս կարող եմ իմանալ որ կարող է իմ արտոնագիրը դադարեցվի

Նահանգային արտոնագրող գործակալությունը ձեզ մի 150-օրվա *Իրավունքի Դադարեցման Մտադրության Նամակ (Notice of Intent to Suspend)* կուղարկի, նշելով դադարեցնելու ամսաթիվը: Եթէ Ձեր արտոնագիրը անցեալում էլ դադարեցվել է, եւ ձեր երեխայի ապրուստադրամի վճարումը ուշացել է կամ լրիվ չի վճարվել, 150-օրվա զգուշացումը ***չի*** ուղարկվի ձեզ եւ ձեր արտօնագիրը մեքենայաբար կը դադարեցվի: Դուք պիտի ձեր փոստային հասցէի փոփոխությունից մեզ տեղեակ պահէք, որ անպայման ստանաք նախնական զգուշացումը:

## Ո՞ր արտօնագրերն են ենթակայ դադարեցման

- Վարորդական իրավունքը
- Զբաղմունքի արտոնագիրը
- Նահանգի կողմից տրված մասնագիտական արտոնագրերը օրինակ՝
    - Կապալառու (contractor)
    - Բժիշկ
    - Ուսուցիչ
    - Փաստաբան
    - Գեղեցկագիտության
    - Անշարժ գույքերի Գործակալ կամ Միջնորդ

## Ի՞նչպէս կարող եմ իմ դադարեցված արտոնագիրը վերականգնել

Կապվէք որեւէ տեղական երեխայի ապրուստադրամի ապահովման գրասենեակ պահանջելու արտոնագրի վերականգնում: Զանգահարելով հետեւյալ հեռախոսահամարին՝ **1-866-901-3212**, Երեխաների ապրուստադրամի ապահովման գրասենեակը Ձեր հետ կը խօսի ձեզ մատչելի տարբերակների մասին:

### Հիշելիքներ...

- Համաձայնության հասնել, կապ հաստատել որեւէ երեխաների ապրուստադրամի գործակալության հետ 150-օր ժամանակամիջոցում, որ ունէք *Իրավունքի Դադարեցման Մտադրության Նամակի* ստանալուց հետո:
- Եթէ Ձեր արտոնագիրը դադարեցվել է անցեալում եւ ուշացրել էք ձեր երեխայի ապրուստադրամի վճարումը կամ վճարումը լրիվ չէք կատարել, 150-օրվա զգուշացումը **չի** ուղարկվի ձեզ եւ ձեր արտօնագիրը մեքենայաբար կը դադարեցվի:

Child Support Directors Association
*A Coalition of Experts Collecting Billions for California's Children*

California Department of Child Support Services

***“Երեխայի ապրուստադրամ... Ներդրում մեր երեխաների ապագայի համար”***

**CHILD SUPPORT DIRECTORS ASSOCIATION (ԵՐԵԽԱՆԵՐԻ ՕԳՆՈՒԹԵԱՆ ԴԻՐԵԿՏՈՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ)**
www.csdaca.org